

ՀՏԴ 336.5:338.1

**ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ**

ԹԱԳՈՒՀԻ ՉԱՓԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում անդրադարձ է կատարվում պետական ծախսերի և տնտեսական աճի միջև առկա տեսական և էմպիրիկ կապերին:

Նախկինում ուսումնասիրությունների մեծ մասն ավելի շատ ընդգծում էին ընդհանուր ծախսերի կարևորությունը՝ որպես սոցիալական և տնտեսական աճի հիմնական խթան: Սակայն, վերջերս մեծ ուշադրություն է դարձվում պետական ծախսերի առանձին բաղադրիչների վրա՝ փորձ կատարելով բացահայտել արդյո՞ք կառավարությունը փոփոխելով ծախսերի կառուցվածքը կարող է խթանել տնտեսական աճը:

Շուրջ տասնհինգ ձևաչափերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ պետական ծախսերի բաղադրիչների և տնտեսական աճի միջև կա արտահայտված կապ, ընդ որում արտադրական ծախսերը տնտեսական աճի վրա ունեն դրական, իսկ ոչ արտադրական ծախսերը՝ բացասական ազդեցություն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պետական ծախսային քաղաքականություն մշակելիս՝ ծախսային բաղադրիչները և դրանց համամասնությունները որոշելիս, նախ և առաջ պետք է հաշվի առնել տվյալ երկրի տնտեսության յուրահատկությունները:

Բանալի բառեր. տնտեսական աճ, պետական ծախս, արտադրական ծախս, ոչ արտադրական ծախս, զարգացման ծախս:

Հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև հնարավոր փոխհարաբերությունների հարցը կարևոր նշանակություն ունի քաղաքականություն մշակելու համար: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական գործունեության վրա եղել և մնում է տնտեսագիտության առավել չկարգավորված խնդիրներից մեկը: Առողջ հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսական աճի կարևոր բաղադրիչն է: Այն ազդում է համախառն պահանջարկի, եկամուտների բաշխման և տնտեսության կարողությունների վրա՝ ապրանքներ և ծառայություններ արտադրելու տեսանկյունից: Կարճաժամկետ հեռանկարում ծախսերի կամ հարկման փոփոխությունները կարող են փոխել ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների պահանջարկի

չափը և ձևը: Ժամանակի ընթացքում համախառն պահանջարկն ազդում է պաշարների բաշխման և տնտեսության արտադրողական կարողությունների վրա՝ ազդելով արտադրության գործոնների վերադարձի, մարդկային ներուժի զարգացման, կապիտալ ծախսերի բաշխման և տեխնոլոգիական նորարարությունների մեջ ներդրումների վրա:

Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությամբ տնտեսական աճի վրա ազդեցության կառուցակարգերը հետազոտողների և գիտական հաստատությունների շրջանում խիստ մտահոգիչ թեմա է: Տեսակետներից մեկն այն է, որ հարկաբյուջետային պակասուրդը և տնտեսական աճը միմյանց ուժեղացնում են [1]: Հակադիր տեսակետն այն է, որ կառավարության գործառույթներն էապես բյուրոկրատական են և, հետևաբար, ճնշում են տնտեսական աճը [2]:

Միաժամանակ, զարգացած երկրներում հարկաբյուջետային գործիքները պետության տրամադրության տակ գտնվող այն հիմնարար լծակներն են, որոնց միջոցով պետությունն ուղղակի կամ անուղղակի ձևով ազդում է ամբողջական առաջարկի և պահանջարկի վրա և, կախված տնտեսական կոնյունկտուրայից, իրականացնում է խթանող կամ զսպող քաղաքականություն: Այլ կերպ ասած, զարգացած երկրներում հարկաբյուջետային քաղաքականությունը տարբերակված բնույթ է կրում և առավելագույնս համահունչ է տնտեսության զարգացման միտումներին և առանձնահատկություններին: Անցումային տնտեսությամբ երկրներում հարկային քաղաքականությունը հիմնականում ունի գանձարանային բնույթ, ինչը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է պետական ծախսերի առավել մեծ ծավալի իրականացման անհրաժեշտությամբ: Անառարկելի է, որ երկրի հարկաբյուջետային համակարգի առանձնահատկությունները, նախ և առաջ, պայմանավորված են տնտեսության յուրահատկություններով [3]:

Շատ ուսումնասիրությունների հիմնական նպատակը պետական ծախսերի մակարդակի տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բացահայտումն էր, այնուամենայնիվ քիչ ջանքեր են գործադրվել պետական ծախսերի մաքուր կազմի հետևանքները քննելու վրա: Փորձենք ուսումնասիրել այն հետազոտությունները, որոնք անդրադարձել են ծախսերի կառուցվածքին: Նման վերլուծություններն առավել կենսական նշանակություն ունեն այնպիսի տնտեսությունների համար, որտեղ պետական ծախսերի մակարդակը բարձրացնելու համար առկա պաշարները սահմանափակ են:

Այսպես, Laissez-faire դոկտրինը, որը մեծ կարևորություն ուներ պետական ֆինանսների ոլորտում, XX դարի առաջին եռամսյակում աստիճանաբար իր տեղը զիջեց տնտեսական աճը խթանելու հարցում պետության դե-

րի վերաբերյալ գաղափարներին: Ժամանակի ընթացքում վարչական ծառայությունների շրջանակն ավելի ընդլայնվեց, քանի որ պետությունն սկսեց ստանձնել նոր գործառույթներ: Նմանատիպ գործոնները հանգեցրին ոչ զարգացման ծախսերի աճին: Սայմոն Կուզնեցը պնդում է, որ երբ երկիրը զարգանում է սկզբում անհավասարության մակարդակը բարձրանում է, հետևաբար հասնում է ահավասարության ամենաբարձր մակարդակին, որից հետո այն սկսում է իջնել կայուն մակարդակի:

Պետական ծախսերը տարանջատվում են երկու խմբի՝ զարգացման և ոչ զարգացման ծախսեր: Զարգացման ծախսերը հիմնականում ուղղված են ենթակառուցվածքների զարգացմանը և դրանք աստիճանաբար աճում են, հետևաբար դրական ազդեցով մասնավոր ներդրումների վրա: Այնուամենայնիվ, ոչ զարգացման պետական ծախսերը դրական են ազդում մասնավոր ներդրումների վրա պահանջարկի խողովակների միջոցով, սակայն նաև կարող են բացասական ազդել բյուջեի պակասուրդի, ապագա հարկման և ներդրումների վրա ոչ լրացնող ազդեցության տեսանկյունից: Մասնավորեցման և վերակարգավորման ժամանակաշրջանում զարգացող երկրների կառավարությունները շարունակում են կատարել ինչպես զարգացման, այնպես էլ ոչ զարգացման ծախսեր:

Այսպես, Դևարաջանը (1996 թ.) իրականացրել է վերլուծություն 43 զարգացող երկրների համար՝ օգտագործելով մոտավորապես 20 տարվա տվյալներ: Նա իր հետազոտությունում կապիտալ ծախսերը դասակարգել է որպես արտադրական ծախս, իսկ ընթացիկ ծախսերը համարել ոչ արտադրական: Սակայն, հակառակ սպասումներին, պարզվեց, որ ընթացիկ ծախսերը տնտեսական աճի վրա ունեն դրական, իսկ կապիտալ ծախսերը՝ բացասական ազդեցություն: Նման արդյունքը բացատրվում է նրանով, որ զարգացող երկրների կառավարությունները սխալ են բաշխել պետական ծախսերը՝ արտադրական ծախսերն ավելացնելով ի հաշիվ ոչ արտադրական ծախսերի, այսինքն՝ եթե արտադրական ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերում արդեն իսկ շատ է, ապա դրա հետագա ավելացումը կբերի բացասական արդյունք [4]:

Համանման ձևով Գուպտան ուսումնասիրեց 39 ցածր եկամուտ ունեցող երկրների ընդհանուր պետական ծախսերում տարբեր տեսակի ծախսերի մասնաբաժինը՝ որպես աճի ռեգրեսիոն փոփոխականներից մեկը և հանգեց Դևարաջանի բացահայտումներին հակադիր արդյունքի: Նույն ժամանակ, Ս. Գոշը և Ա. Գրեգորիուն եկել են այն նույն եզրահանգման, ինչ Դևարաջանը: Համաձայն որի՝ 15 զարգացող երկրներում ավելի քան 28 տարիների (1972-1999 թթ) ընթացքում ոչ արտադրական ծախսերի մասնաբաժինը տնտեսական աճում ավելի շատ է, քան արտադրական ծախսերինը [5]:

Միևնույն ժամանակ, ընդհանուր առմամբ կան մի քանի ակնհայտ և իրական գործոններ, որոնք հանգեցնում են ոչ զարգացման ծախսերի աճի՝ բնակչության աճ, փողի առաջարկ և այլն:

Գեմելլն (2016 թ.) ուսումնասիրել է ընդհանուր ծախսերում տարբեր տեսակի ծախսերի մասնաբաժինների փոփոխության ազդեցությունը երկարաժամկետ աճի վրա: Նա հետազոտության համար դիտարկել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) 17 երկրների 1970-2007 թթ. տվյալները: Արդյունքում եզրակացրել, որ տնտեսական աճի վրա արտադրական ծախսերի համակցությունը (օրինակ՝ տրանսպորտ, կապ, կրթություն, առողջապահություն) ունի դրական ազդեցություն, իսկ ոչ արտադրական ծախսերը (սոցիալական ապահովություն)՝ բացասական [6]:

Ս. Գոշը և Ա. Գրեգորիուն (2008 թ.) նույնպես բացահայտեցին կապ տարանջատված պետական ծախսերի և տնտեսական աճի միջև, դիտարկելով 15 զարգացող երկրների ցուցանիշները՝ պահի ընդհանրացված մեթոդներով (GMM): Արդյունքները ցույց տվեցին, որ կա խոր կապ դիտարկվող պետական ծախսերի տեսակի հետ՝ կապիտալ կամ ընթացիկ: Հետագա ուսումնասիրությունները հանգեցրին այն արդյունքին, որ գործառնական և պահպանման ծախսերն ավելի մեծ ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, քան կրթության և առողջապահության վրա կատարվող ծախսերը [7]:

Ա. Գ. Հասնուլն (2015թ.) ուսումնասիրել է Մալայզիայում պետական ծախսերի և տնտեսական աճի միջև առկա կապերը՝ հիմք ընդունելով 1970-2014թթ. ժամանակաշրջանը: Մի կողմից պետական ծախսերը տարանջատվել են կառավարական գործառնական և զարգացման ծախսերի, մյուս կողմից, պետական ծախսերը տարանջատվել են ըստ այն ոլորտների, որտեղ այդ ծախսերը կատարվում են: Օգտագործելով սովորական նվազագույն քառակուսիների մեթոդը (OLS) վերլուծվել և բացահայտվել է, որ ուսումնասիրվող երկրներում գոյություն ունի բացասական հարաբերություն համախառն պետական ծախսերի և տնտեսական աճի միջև: Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ Մալայզիայում պետական ծախսերի զարգացման տեսակը և տնային տնտեսությունների հատվածը նույնպես բացասական են ազդում աճի վրա [8]:

Ռ. Ստրաուբի կատարած հետազոտությունները, Եվրոպական երկրների վերաբերյալ, հանգեցրին այն եզրակույթանը, որ տնտեսական աճի վրա արտադրության, սպառման, իրական աշխատավարձի երկարաժամկետ ազդեցությունը բացասական, մինչդեռ կապիտալ ծախսերի ազդեցությունը դրական է [9]:

Գրեթե նույն մեթոդաբանությամբ Ա. Շահիդը (2013 թ.) ուսումնասիրեց Պակիստանում պետական ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա, դիտարկման համար հիմք ընդունելով 1972-2009 թթ. ժամանակաշրջանը: Նա պետական ծախսերը բաժանեց զարգացման և ընթացիկ ծախսերի բաղադրիչների: Օգտագործելով ավտոռեգրեսիվ բաշխված շարքերի ձևաչափը (ARDL)՝ բացահայտեց, որ Պակիստանում զարգացման ծախսերը դրական են ազդում տնտեսական աճի վրա [10]:

Դ. Ֆուչերիի կողմից ՏՀՀԿ երկրների 1980-2005 թթ. տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական ծախսերը ՀՆԱ-ի վրա ունենում են ընդլայնողական ազդեցություն: Մասնավորապես, նա բացահայտել է, որ սոցիալական ծախսերի 1 տոկոս աճն ավելացնում է ՀՆԱ-ն 0,1 տոկոսային կետով, հաշվի առնելով այն, որ սոցիալական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բավականին մեծ է, ապա այն համանման է մոտ 0,6 բազմարկչի: Այս արդյունքն ավելի զգալի է անկումների ժամանակաշրջանում: Սոցիալական ծախսերի ենթակատեգորիաներից առողջապահության ծախսերը և գործազրկության նպաստներն ունեն ամենամեծ ազդեցությունը [11]: Միաժամանակ սոցիալական ծախսերը խթանում են մասնավոր սպառումը, մինչդեռ ներդրումների վրա ունեն չնչին ազդեցություն:

Սանտյագո Ակոստա-Օրմաեչեան և Ացույոշի Մորոզումին ուսումնասիրել են պետական ծախսերի վերաբաշխման հետևանքներն աճի վրա՝ ծախսերի տնտեսագիտական և գործառույթային (ֆունկցիոնալ) դասակարգումների պայմաններում: Հետազոտությունն իրականացվել է պահի ընդհանրացված մեթոդով (GMM): Նրանք եզրակացրին, որ ընդհանուր առմամբ հնարավոր չէ վիճակագրորեն հիմնավորված ձևով սահմանել ծախսային այնպիսի կառուցվածք, որը կապահովի տնտեսական աճ: Օրինակ՝ չնայած կապիտալ ծախսերի աճի ֆինանսավորումն ընթացիկ ծախսերի նվազեցման հաշվին ունի դրական ազդեցություն, միաժամանակ արդյունքի կարևորությունը կախված է ձևաչափից: Այսպիսի թույլ կողմերն ի հայտ են գալիս նույնիսկ այն ժամանակ, երբ կառավարությունը վերաբաշխում է իր ծախսերը: Մասնավորապես, նրանք գտնում են, որ ոչ մի պետական ծախսի վերաբաշխում՝ պաշտպանության, տնտեսական ենթակառուցվածքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության միջև չունի ուժեղ ազդեցություն տնտեսական աճի վրա: Այնուամենայնիվ, երբ ծախսերի համակցության փոփոխությունը ենթադրում է կրթության ծախսերի ավելացում՝ կարծես թե առաջ է գալիս կայուն կապ երկարաժամկետ աճի հետ: Այս համակցությունը մասնավորապես ուժեղ է, երբ փոխհատուցող գործոնը տեղայնացված չէ կամ երբ համակցված է սոցիալական պաշտպանության ծախսերի փոխհատուցման կրճատմամբ: Նման արդյունքը հուշում է, որ կրթությունը կարող է լինել համեմատաբար ավելի արդյունավետ ծախս՝ մարդկային ներուժի կուտակման միջոցով աճը խթանելու տեսանկյունից:

Չնայած, որ մասնագիտական գրականությունում տարբեր հետազոտողների կողմից կարևորվում են գործառության դասակարգման տարբեր ծախսեր՝ նրանք գտնում են, որ այդ ծախսերի ավելացումը ծախսային այլ բաղադրիչների անկման հաշվին նշանակալի կապ չունի աճի հետ: Իսկ ծախսերի տնտեսագիտական դասակարգման ժամանակ նրանք ավելի շատ կենտրոնացել են աշխատավարձի (կամ ինչպես իրենք են նշում աշխատողների փոխհատուցման), ոչ ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման և մնացած ծախսերի վրա: Ըստ նրանց՝ ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման ծախսերի (այսինքն՝ կապիտալ ծախս) աճը ի հաշիվ փոխհատուցման ծախսերի (այսինքն՝ ընթացիկ ծախս) դրական է ազդում աճի վրա [12, էջեր 1-45]:

Անդրադառնանք գործառական դասակարգման ծախսային բաղադրիչների վերաբերյալ առկա այլ տեսությունների և: Այսպես, օրինակ՝ Բլանկենաուն և Սիմփսոնը (2004) անդրադառնալով կրթության վրա կատարվող ծախսերին, տեսականորեն ցույց են տալիս, որ հանրակրթության ծախսերի հետևանքներն աճի վրա կարող են լինել ոչ միատոն: Մասնավորապես, նրանց ձևաչափը ենթադրում է, որ չնայած հանրակրթության ծախսերը դրականորեն են ազդում աճի վրա՝ ուղղակիորեն խթանելով մարդկային ներուժի կուտակումը, կան նաև ընդհանուր հավասարակշռության պոտենցիալ բացասական ազդեցություն՝ կախված այդ ծախսերի ֆինանսավորման ձևից [12, էջ 7]: Մինչդեռ ըստ Լուկասի՝ հանրակրթության ծախսերը խթանում են մարդկային կապիտալի կուտակումը, որն ունի չնվազող սահմանային եկամտաբերություն և ստեղծում է ներծին (էնդոգեն) աճ [13]:

Համանման ձևով Աժենորը (2010 թ.) ենթադրում է, որ առողջապահական ծախսերը դրական են ազդում տնտեսական աճի վրա՝ ազդելով աշխատուժի արտադրողականության վրա:

2010-ին Աժենորն անդրադառնալով գործառական դասակարգման բաղադրիչին՝ հանրային ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերին, տեսականորեն ցույց է տալիս, որ միայն այն ժամանակ, երբ պետական ներդրումների աստիճանը բարձր է ծախսերի բաշխումը՝ «անարտադրողական» ծախսերից դեպի ենթակառուցվածքների վրա կատարվող ծախս, կարող է խթանել աճը [12, էջ 8]: Մինչդեռ Աշաուերը (1989 թ.) պնդում է, որ ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերը դրական են ազդում տնտեսական աճի վրա:

Աղյուսակ 1

Պետական ծախսերի կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա

Հեղինակ	Ազդեցություն	Ծախսային բաղադրիչ
Դևարաջան (1996 թ.)	դրական	ոչ արտադրական (ընթացիկ)
	բացասական	արտադրական (կապիտալ)
Գուպտա	բացասական	ոչ արտադրական (ընթացիկ)
	դրական	արտադրական (կապիտալ)
Գոշ և Գրեգորիու	դրական	ոչ արտադրական (ընթացիկ)
	բացասական	արտադրական (կապիտալ)
Գեմելլ (2016 թ.)	դրական	արտադրական (տրանսպորտ, կապ, կրթություն, առողջապահություն)
	բացասական	ոչ արտադրական (սոցիալական ապահովություն)
Ալեքսեյ Բալան (2000-2017 թ.)	դրական	արտադրական (ազգային տնտեսություն, կրթություն և առողջապահություն)
	բացասական	ոչ արտադրական (պաշտպանության և սոցիալական ապահովություն)
Ալեքսեյ Կուդրին և Ալեքսանդր Կնոբել	դրական	արտադրական
	բացասական	ոչ արտադրական
Ս. Գոշ և Ա. Գրեգորիու (2008 թ.)	դրական	գործառական և պահպանման
	բացասական	կրթության և առողջապահության
Ռ. Ստրաուբի	դրական	կապիտալ
	բացասական	արտադրության, սպառման, իրական աշխատավարձ
Ա. Գ. Հասնուլ (2015 թ.)	բացասական	կառավարական/գործառական և զարգացման
Ա. Շահիդ (2013 թ.)	դրական	զարգացման ծախսեր
		ընթացիկ ծախսեր
Ալեքսանդրա Ջիենիցկա	դրական	սոցիալական ծախսեր
Սանտյագո Ակոստա-Օրմաեչեա և Ացույոշի Մորոզումի	դրական	ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման ծախսերի (այսինքն՝ կապիտալ ծախս)

Բլանկենաու և Սիմփսոն (2004 թ.)	դրական	հանրակրթություն
Լուկասի	դրական	հանրակրթություն
Աժենոր (2010 թ.)	դրական	առողջապահության
Աշաուեր (1989 թ.)	դրական	ենթակառուցվածքներ
Բարրո	դրական	պաշտպանություն

Բարրոն անդրադառնալով պաշտպանության վրա կատարվող ծախսերին՝ նշում է, որ այս ծախսերը կարող են խթանել ներդրումները՝ ձեռնարկատերերի սեփականության իրավունքի պաշտպանվածության հաշվին և դրանով իսկ խթանել աճը [12, էջ 8]:

Ռուս փորձագետ Ալեքսեյ Բալակը 2000-2017 թ. տվյալների հիման վրա գնահատել է ՌԴ բյուջետային ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիայի (SVAR) մեթոդաբանությամբ: Համաձայն գնահատումների արտադրական (ազգային տնտեսության, կրթության և առողջապահության) ծախսերի մասնաբաժնի՝ աճն ունի դրական, մինչդեռ ոչ արտադրական (պաշտպանության և սոցիալական քաղաքականության) ծախսերի մասնաբաժնի աճն ունի բացասական ազդեցություն տնտեսական աճի վրա: Արտադրական ծախսերից տնտեսական աճի վրա ամենամեծ դրական ազդեցությունը թողնում են ազգային տնտեսության վրա կատարվող ծախսերը, երկրորդ տեղում կրթության վրա կատարվող ծախսերն են [14]:

Ալեքսեյ Կուդրինը և Ալեքսանդր Կնոբելը «Հարկաբյուջետային քաղաքականությունը որպես տնտեսական աճի աղբյուր» հետազոտության մեջ դիտարկել են բյուջետային ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Վեկտորային ավտոռեգրեսիայի (VAR) մեթոդաբանությամբ իրականացված գնահատումները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ արտադրական ծախսերն ավելի մեծ բազմարկչային ազդեցություն ունեն ՀՆԱ-ի վրա, քան ոչ արտադրական ծախսերը: Նրանց հետազոտությունը ցույց է տալիս, որ ոչ արտադրական ծախսերի վերաբաշխումն արտադրական ծախսերի վրա կարող է երկարաժամկետ տնտեսական աճը մեկ տարում մեծացնել մոտավորապես 0.8 տոկոսային կետով [15]:

Այսպիսով՝ ներկայացված ձևաչափերի ընդհանուր վերլուծությունից կարելի է եզրակացնել.

- կառուցված ձևաչափերը վիճակագրորեն կարևոր են և արտացոլում են պետական ծախսերի առանձին բաղադրիչների և տնտեսական աճի միջև առկա կապերը,
- ծախսային առանձին բաղադրիչների ազդեցության ուսումնասիրությունը օգտակար է, քանի որ այն հնարավորություն է ընձեռում քաղաքականություն մշակողներին կատարել արդյունավետ վերաբաշխում,

- արտադրական ծախսերը տնտեսական աճի վրա ունեն դրական, իսկ ոչ արտադրական ծախսերը բացասական ազդեցություն,
- ծախսային առանձին բաղադրիչների ազդեցությունը կախված երկրի տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններից տարբեր հարաբերակցությամբ է արտացոլվում տնտեսական աճի վրա,
- տնտեսական աճը հնարավոր է խթանել ծախսային արդյունավետ քաղաքականության և ծախսերի օպտիմալ ծավալի որոշման միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ

1. **Easterly W., Schmidt-Hebbel K.**, “Fiscal Deficits and Macroeconomic Performance In Developing Countries”, The World Bank Research Observer, Volume 8, Issue 2, July 1993, pp. 211–237.

2. **M'Amanja D., Morrissey O.**, “Fiscal Policy and Economic Growth in Kenya”, Centre for Research in Economic Development and International Trade, University of Nottingham, Issues 5-6 of CREDIT research paper, 2005, p. 51. <https://www.nottingham.ac.uk/credit/documents/papers/05-06.pdf> (Last accessed: 11.11.2020).

3. **Քոստանջյան Վ.**, «Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2017, էջ 363:

4. **Devarajan Sh., Swaroop V., Zou H.**, “The composition of public expenditure and economic growth”, Journal of Monetary Economics 37, Policy Research Department, The World Bank, Washington, DC 1996, pp. 313-344 https://www.academia.edu/2472905/The_composition_of_public_expenditure_and_economic_growth (Last accessed: 20.11.2020).

5. **Chu T., Hölscher J., McCarthy D.**, “The impact of productive and non-productive government expenditure on economic growth: an empirical analysis in high-income versus low- to middle-income economies”, Springer, 2018, p. 26. https://www.researchgate.net/publication/329426217_The_impact_of_productive_and_non-productive_government_expenditure_on_economic_growth_an_empirical_analysis_in_high-income_vs_low-to_middle-income_economies (Last accessed: 20.11.2020).

6. **Kneller, R., Bleaney, M. and Gemmell, N.**, “Public policy and the government budget constraint: evidence from the OECD”, Journal of Public Economics, Vol. 74, 1999, pp. 171-190.

7. **Nyasha S.**, “The impact of public expenditure on economic growth: A review of international literature” *Folia Oeconomica Stetinensia*, Volume 19 (2019) Issue 2, pp. 81-101. <https://sciendo.com/article/10.2478/fofi-2019-0015> (Last accessed: 25.11.2020).

8. **Hasnul A.G.**, “The effects of government expenditure on economic growth: the case of Malaysia” MPRA Paper, 2015, p 16 https://mpra.ub.uni-muenchen.de/71254/1/MPRA_paper_71254.pdf (Last accessed: 25.11.2020).

9. **Straub R. and Tchakarov I.**, “Assesing the Impact of a Change in the Composition of Public Spending: A DSGE Approach”, IMF Working Paper No. 795, 2007, p. 49 <https://www.ecb.europa.eu/pub/pdf/scpwps/ecbwp795.pdf> (Last accessed: 25.11.2020).

10. **Shahid A., Rabbi F., Hayat U., Ali N.**, “The composition of public expenditure and economic growth: Evidence from Pakistan” *International Journal of Social Economics*, 40 (11), 2013, p. 1010-1122. <https://www.researchgate.net/publication/263690356> The composition of public expenditures and economic growth Evidence from Pakistan (Last accessed: 27.11.2020).

11. **Furceri D., Zdzienicka A.**, “The Effects of Social Spending on Economic Activity: Empirical Evidence from a Panel of OECD Countries”, OECD and University of Palermo, 2010, p. 30. <https://dialnet.unirioja.es/descarga/articulo/3630883.pdf> (Last accessed: 27.11.2020).

12. **Leeuwen van Bas**, “Is Lucas right? On the role of human capital in growth theory”, *Human Capital and Economic Growth*, p. 25. <https://cgeh.nl/sites/default/files/Human-capital-hub/11-chapter6.pdf> (Last accessed: 27.11.2020).

13. **Ormaechea S., Morozumi A.**, “Can a Government Enhance Long-Run Growth by Changing the Composition of Public Expenditure?”, IMF Working Paper, 2013, p 45. <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2013/wp13162.pdf> (Last accessed: 08.12.2020).

14. **БАЛАЕВ А.**, ВЛИЯНИЕ СТРУКТУРЫ БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ В РОССИИ, *Экономическая политика*. 2018. Т. 13. № 6. с. 8–35. <https://cyberleninka.ru/article/n/vliyanie-struktury-byudzhetyh-rashodov-na-ekonomicheskij-rost-v-rossii/viewer> (Последний доступ: 17.05.2021).

15. **Кудрин А., Кнобель А.**, Бюджетная политика как источник экономического роста*, *Макроэкономические исследования, Вопросы экономики*. 2017. № 10., с. 5—26. <https://akudrin.ru/uploads/attachments/file/17/kudrin10-17.pdf> (Последний доступ: 17.05.2021).

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ВЗАИМОСВЯЗИ СТРУКТУРЫ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ И ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

ТАГУИ ЧАПАНЯН

Академия государственного управления Республики Армения

В статье рассматриваются теоретические и эмпирические связи между государственными расходами и экономическим ростом.

В прошлом большая часть исследований больше подчеркивала важность общих расходов как основного стимула социального и экономического роста. Однако в последнее время большое внимание уделяется отдельным компонентам государственных расходов, пытаюсь выяснить, может ли правительство, изменив структуру расходов, стимулировать экономический рост.

В результате исследования около пятнадцати моделей было выявлено, что существует сильная взаимосвязь между компонентами государственных расходов и экономическим ростом, при этом производственные расходы оказывают положительное влияние на экономический рост, а непроизводственные расходы - негативное.

В то же время необходимо подчеркнуть, что при разработке политики государственных расходов, в том числе при определении составляющих расходов и их пропорций, в первую очередь важно учитывать особенности экономики той или иной страны.

Ключевые слова: экономический рост, государственный расход, производственный расход, непроизводственный расход, расходы на развитие.

THEORETICAL FOUNDATIONS OF THE RELATIONSHIP BETWEEN THE STRUCTURE OF PUBLIC SPENDING AND ECONOMIC GROWTH

TAGUHI CHAPANYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

The article discusses the theoretical and empirical links between government spending and economic growth.

In the past, much of the research has emphasized the importance of total expenditures as the main driver of social and economic growth. Recently, however, much attention has been paid to the individual components of public expenditures, trying to find out whether the government can stimulate economic growth, changing the structure of expenditures.

As a result of studying about fifteen models, it turned out that there is a strong relationship between the components of public expenditures and economic growth, at the same time, productive expenditures have a positive impact on economic growth, and non-productive expenditures have a negative impact.

At the same time, it is necessary to emphasize that during the development of public expenditure policy, including determining the expenditure components and their proportions, first of all, it is important to take into account the peculiarities of the economy of a given country.

Keywords: economic growth, public expenditure, production expenditure, non-production expenditure, development expenditure.

*Ներկայացվել է խմբագրություն 28.12.2021
Երաշխավորվել է տպագրության 23.05.2021*